Գետաշենցի անդադրում ծերունին

Արդեն 23 տարի Սեւանում է ապրում ծնունդով գետաշենցի Ռաֆիկ Ճաղարյանը: Նա 74 տարեկան է, պատերազմի վետերան, բաղում շքանշանների ասպետ: Ալեհեր ծերունին այդ հասակում չի կորցրել ոգու արիությունը, ավելին՝ կարողացել է հայրենասիրություն սերմանել իր որդիների՝ Միքայելի եւ Սերգեյի մեջ:

Դեռ 1988 թ. նա Կիրովաբադի մաս կազմող Կարմիր գյուղում էր: Թուրքերն այդ ժամանակ հասել էին Այգեստան, բայց Գետաշեն մտնել չկարողացան: Կանգնել էին 28 կմ հեռավորության վրա, իսկ այդ ընթացքում Ռաֆիկ Ճաղարյանի ցուցումով ողջ Գետաշենում փորվում էին խրամատներ: Պատերազմի հերոսը կարողացավ հանդիպում ունենալ ԽՍՀՄ զինված ուժերի նախարարի հետ եւ Կիրովաբադի բանտից ազատել իր համագյուղացուն՝ գիտությունների թեկնածու, մանկավարժական դասախոս Բենիկ Սիսյանին: Սեւանում գտնվելու ժամանակ նույնպես չէր կարող հանգիստ լինել: Նա այստեղից Գետաշեն ուղարկեց ութ ուղղաթիռ, իսկ վերջերս հայրենասեր այդ ծերունին եղավ Դիլիջանում, ուր՝ կոմպոզիտորների տանը տեղավորված են նրա հայրենակիցների 59 ընտանիքներ: Հորից ետ չի մնում որդին՝ Սերգեյ Ճաղարյանը: Նա մինչեւ վերջին իրադարձությունները Գետաշեն էր տարել հինգ հազար ռուբլու ապրանք, 100 զույգ կոշիկ եւ այլն: Իսկ այսօր Սեւանի իրենց տանը նրանք հյուրընկալել են Գետաշենից մազապուրծ եղած համագյուղացիների:

Ականատեսի վկայությամբ

Գետաշենից բռնագաղթված Արշակ Սաֆարյանը մի կողմից փառք է տալիս աստծուն, որ կարողացել է դուրս պրծնել թուրքական խուժանի եւ ռուսական զինվորների ձեռքից, մյուս կողմից նեղվում, որովհետեւ այնտեղ է մնացել նրա 30-35 տարվա աշխատանքային վաստակը:

- Ողջ գյուղը թալանեցին, խոշտանգեցին: Մի կերպ հասանք Սեւան, ուր մեզ ընդունեց մեր հայրենակից Ռաֆիկ Ճաղարյանը: Չկա այլեւս մեր հարազատ Գետաշենը, այլ կա ադրբեջանական Հայքենդը: Հիմա էլ թե՞ մնանք Գետաշենում սպասել իր տանը եւ մաշկել գլուխը: Կայնահարել էին Սողոմոնյան Մելսիկին: Ամենուր խոշտանգված դիակներ էին, արյուն ու թալան: Ու այս ամենի հեղինակը կաշառված ու հարբած, դեմքերը ներկած ու անճանաչելի դարձած ռուս զինվորականներն էին եւ արնախում օմոնականները:

Սպանվեց նաեւ բոլորիս կողմից սիրված Թաթուլ Կրպեյանը, որը մինչ այդ «դաս էր տվել» մի մարտունաշենցու՝ պարզելով, որ վերջինս կապ է պահպանում եւ սնունդ վաճառում թուրքերին: Բայց դժբախտաբար նա զոհվեց, ընկավ հերոսի մահով: Անգամ նրա կողմից գերեվարված եւ հետո «ուշքի եկած» գեներալը ապշած էր մնացել Թաթուլի հերոսության վրա:

Ինչ-որ մենք տեսանք, մեր թշնամին թող չտեսնի:

Վ. Սիմոնյան